

Հարգելի ուսանողներ, դասախոսներ, մեծարգո հյուրեր

Այսօր մենք նշում ենք մեր մարզի մայր բուհի հիմնադրման 80-ամյակը: Մի կենսագրություն, որի էջերը ներառում են հազարավոր ուսանողների, հարյուրավոր դասախոսների տասնամյակներ ձգվող պատմությունը:

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս այս արժանի հոբելյանի կապակցությամբ:

Մայրաքաղաքից հեռու գտնվող Շիրակի և հարակից բնակավայրերում մանկավարժական կադրերի խիստ պակասը ստիպեցին Հայաստանի այն ժամանակվա կուսակցական ղեկավարությանն ու պետական իշխանություններին հեռավոր 30-ական թվականներին մանավարժական բուհ հիմնել երկրի երկրորդ քաղաքում, քանի որ կրթական ոլորտի զարգացմանը խոչնդոտում էր մանկավարժական կադրերի պակասը: Դպրոցներում դասավանդում էին մեծամասամբ յոթնամյա կրթությամբ ուսուցիչներ, որոնք իրենց պարտականությունները կատարում էին բարեխղճորեն, սակայն հնարավորությունները թույլ տվեք ասել սահմանափակ էին:

Քաղաքում արդյունաբերությունը վերելք էր ապրում, մինչդեռ կրթական ոլորտում կային լուրջ դժվարություններ:

Անհրաժեշտ էր ստեղծել տարածաշրջանի դպրոցները տեղական կադրերով համալրող բուհ, որը ուղղակի ազդեցություն կունենար քաղաքի և տարածաշրջանի հասարակական, քաղաքական կյանքի ակտիվացման վրա և հիմք կդնէր տարածքում մտավորականության ձևավորմանն ու գիտական կադրերի պատրաստմանը: Դա եղավ Լենինականի Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը, որն իր ուրույն դիմագծով հաստատեց իր տեղը Հանրապետության լավագույն բարձրագույն դպրոցների շարքում:

Հիշենք, որ իր գոյության 80 տարիներին Գյումրու Միքայել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտը երկրին տվել է ավելի քան 27000 շրջանավարտ, որի մեծագույն մասը նվիրվել է դպրոցին, պատվախնդրորեն կրել և այսօր էլ կրում է մանկավարժի վեհ կոչումը: Հազարավոր փորձաշատ կամ դեռ նորաթուխ ուսուցիչներ, տասնյակ վաստակավոր մանկավարժներ, հայրենական գիտության, մշակույթի և պետական կառավարման բնագավառի գործիչներ են որոնք, անշուշտ, հպարտության ջերմագին զգացողությամբ են հիշում հարազատ բուհի հարկի տակ անցկացրած ու երբեք չմոռացվող տարիները: Մենք էլ ենք եղել ուսանող և քաջ գիտենք, թե բուհական միջավայրն ինչ ազդեցություն է ունենում երիտասարդության վրա, նրա հայրենասիրական դաստիարակության, աշխարհընկալման, և ընդհանրապես, միջավայրի մթնոլորտի վերափոխման վրա:

Հարգելի բարեկամներ.

Շնորհավորում եմ բուհի ռեկտոր Վարդևան Գրիգորյանին, որի անմիջական ղեկավարությամբ են տեղի ունեցել բուհում կատարված բարենորոգումներից շատերը:

Շնորհավորանքներս ռեկտորատին, դասախոսներին, ուսանողներին և բոլոր տարիների շրջանավարտներին՝ այս հրաշալի տոնի՝ 80-ամյա հոբելյանի առթիվ:

Հարգելի դասախոսներ, ցանկանում եմ, որ այսուհետև էլ պարտքի բարձր գիտակցությամբ ու պատասխանատվությամբ իրականացնեք երիտասարդ սերնդի կրթության հայրենանվեր գործը և այդ ճանապարհին մատրթում եմ նախաձեռնող և հանդուրժող լինելու կարողություն, համբերատարություն, եռանդ ու սեր:

Չէ որ այդ է պահանջում մեր երկրի շահը, և դրանով շահագրգիռ են նաև Հայաստանի Հանրապետության Նախագահը և Կառավարությունը:

Բոլորիդ ցանկանում եմ ամենայն բարիք, հաջողություններ ուսման մեջ, ընտանիքում և աշխատանքում:

Շիրակի մարզպետ՝

Ֆելիքս Յուլյան